

Բայց պէտք է քալել...

Բարձր Հայքէն անիկա չունեցաւ առատ յեղուժ: Սանասարեանը իմացական բարեխառնութիւն էր ու դասատունները փոխանակուած էին մշակոյթի հերոսներով: Տեսակ մը Վասպուրական, նուազ իմաստակ, նուազ եռանդուն: Տեսնուեցաւ յեղափոխական կազմին, անգոսնելով Ատանայի առաջնորդին պատուէրը, բայց մնաց զգոյշ, չյայտնելով ինքզինքը: Լրտեսներէ հոտ առնուած, դիմեց եպիսկոպոսին, ուսուցչական պաշտօն խնդրելու: Մերժեցին զինքը: Բայց միւս կողմէ իր տիպարը հասարակցաւ: Վասնզի շրջանի գեղերուն մէջ շատ էին այդ մարդիկը, պաշտօնի համար մէկ տեղէն միւսը թափառական: Սանասարեանը ողողած էր ասպարէզը: Ու թուրք շրջուն մոլլանները յիշեցնող երիտասարդներ հանդիպելի էին կարաւաններու մէջ: Այս հնարքը զինքը ընկղմեց այդ միջակութեան խորը: Օգտուելով իր շուրջը ստեղծուած չէզոքութենէն, յետոյ՝ անտարբերութենէն, շահագործեց առիթը Կարապետ չորպաճիին հետ Կեսարիա անցնելու: Բարձր Հայքին ազդեցութիւնը եղած էր ժխտական: Մաթիկը լքած էր Ատանայի մէջ մշակուած ծրագիրները: Պարզ ճամբորդ, հետաքրքիր՝ կայսրութեան ընծայելիք նորութիւններով: Արկածախնդիրն էր, որ իր մէջ կու գար ելանին: Իր ընկերը կը համակրէր իրեն: Անշուշտ, փորձ, ականջը ծակ երիտասարդ, անիկա ունեցաւ կասկածի ըրպէներ: Բայց քոմիթան, իր խտացուած սարսափին կշիռը անգետեղելի խորհուրդ էր ընկեր Մաթիկի ճղճիմ մարմնին: Մինչեւ Կեսարիա, անիկա կատարեց անցագրի գործողութիւնները:

Ընկեր Մաթիկի տպաւորութիւնները նոյնքան շահեկան են այդ մարդերէն, մա՛նաւանդ թուրք ժողովուրդէն ու բուն քաղաքէն:

Դժբախտաբար չեմ կրնար տարածուիլ անոր զգայնութիւնները լրիւ ընդգրկելու: Մաթիկը Կեսարիայէն ունէր իր մէջ միակտուր յորինուած տրամուլթիւն: Ու իրեն քով՝ իր արդի անխօս ընկերը: Հիմնականը խոր ու